



**Մտադրութեան Ծանուցում
Մեղմացնելու Բացասական
Ցայտարարութիւն Եւ Հանրային
Մեկնաբանութիւններու Ժամանակամիջոցի՝
Կենսոլորտային Նախնական Գնահատման-Համագոր Եւ Վերացումի
Գործողութեան Աշխատանքի Ծրագիր Որդեգրելու**



**Ուղղուած՝
Ծրագիրի խորագիր՝
Նիւթ՝**

Գործակալութիւններու, Կազմակերպութիւններու, Կալուածատէրերու եւ Հետաքրքրուող Կողմերու Ուլիսըզ Ս. Կրեմթ Հայ Սֆուլ Մեծապարփակ Արդիականացման Ծրագիր
Մտադրութեան Ծանուցում Մեղմացնելու Բացասական Ցայտարարութիւն Եւ Հանրային Մեկնաբանութիւններու Ժամանակամիջոցի՝ Կենսոլորտային Նախնական Գնահատման-Համագոր Եւ Վերացումի Գործողութեան Աշխատանքի Ծրագիր Որդեգրելու

ԱՅՍՈՒ, ԾԱՆՕԹԱԳՐՈՒԹԻՒՆ ԿԸ ՏՐՈՒԻ, թէ Լոս Անճելըսի Միացեալ Կրթաշրջանը (LAUSD կամ District), իրրեւ Քալիֆորնիոյ Կենսոլորտի Որակի Օրէնքի (CEQA) ենթակայ Առաջնորդող Գործակալութիւն՝ պատրաստեց Նախնական Ուսումնասիրութիւն մը (IS) Ուլիսըզ Ս. Կրեմթ Հայ Սֆուլի Մեծապարփակ Արդիականացման Ծրագիրին համար (առաջարկուած ծրագիր), ըստ CEQA-ի (Public Resources Code [PRC]-Հանրային Միջոցներու Կանոնագիրի, 13րդ Բաժինի, Մաս 21000ին եւ ի հետեւումն՝ «CEQA կանոն»ին եւ Քալիֆորնիոյ Օրէնքներու Կանոնագիրի [CCR], 14րդ Վերնագիրի, 6րդ Բաժինի, Մաս 15000ին, եւ ի հետեւումն «CEQA Ուղեգիծ»ին): Հիմնուելով IS-ին վրայ՝ LAUSD-ը հաստատեց, որ առաջարկուած ծրագիրը յատկանշականօրէն աննպաստ ազդեցութիւններ պիտի չունենայ կենսոլորտին վրայ, եւ Մեղմացում Բացասական Ցայտարարութիւն (MND) մը յարմար է: Կրթաշրջանը հանրային ազդարարութիւն կը հայթաթէ՝ ենթարկուելով Քալիֆորնիոյ Օրէնքներու Կանոնագիրի 14րդ Վերնագիրի, 3րդ Գլուխի, Մաս 15072ին եւ 15073ին, փոփոխուած օրէնքներուն հիման վրայ: Յաւելեալ ծանօթագրութիւն կը տրուի, թէ Կենսոլորտային Նախնական Գնահատման-Համագոր (PEA-E) եւ Վերացումի Գործողութեան Աշխատանքի Ծրագիր (RAW) մը պատրաստուած է առաջարկուած Ծրագիրին համար եւ տրամադրելի է ընթերցման:

ԾՐԱԳԻՐԻ ՎԱՅՐ՝ Ծրագիրի վայրը կը գտնուի 13000 Oxnard Street, Los Angeles, in Los Angeles County, California հասցէին:

ԾՐԱԳԻՐԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹԻՒՆ՝ Առաջարկուած ծրագիրը կը բաղկանայ Ուլիսըզ Ս. Կրեմթ Հայ Սֆուլի ներկայի վարժարանային վայրի ամբողջ տարածքի բարեկարգումներէն եւ արդիականացումներէն, որոնք պիտի ընդգրկեն քանդակարարական կարելիութենէ դուրս գտնուող կառոյցներու, նոր շէնքերու կառուցումը, գոյութիւն ունեցող վարժարանի տարածքներուն բարելաւումը, ենթակառոյցներու եւ սարքերու նորացումը եւ ամբողջ տարածքին վրայ զանազան այլ բարեկարգումներ՝ Ամերիկացիներ Անկարութեանց Հետ օրէնքին հիման վրայ: Առաջարկուած Ծրագիրը ուրուագծուած է ուղղելու համար վարժարանին մէջ շէնքերուն եւ հողատարածքին ֆիզիքական վտանգներու վերաբերող մտահոգութիւնը, նոյն ատեն բարեփոխելու, վերանորոգելու, արդիականացնելու եւ վերածնունդ տալու վարժարանը, որպէսզի տրամադրէ տարածքներ, որոնք ապահով են եւ համապատասխան՝ դաստիարակչական այժմու նախագիծին:

ԿԵՆՍՈԼՈՐՏԱՅԻՆ ՀԱՒԱՆԱԿԱՆ ԱԶԳԱԿՆԵՐ՝ Ըստ CEQA-ի Ուղեգիծներու Հատուած 15060(d)ին եւ հիմնուելով IS-ի մէջ կատարուած կենսոլորտային վերլուծութեան վրայ՝ Կրթաշրջանը հաստատեց, որ առաջարկուած Ծրագիրին համար MND մը յարմար մակարդակն է կենսոլորտային փաստագրութեան:

PEA-E-ը եւ RAW-ը կը ներկայացնեն այս Ծրագիրին համար իրականացած կենսոլորտային հետազոտութիւններուն եզրակացութիւնները եւ կ'ուրուագծեն վնասուած հողի վերացման ու վայրէն հեռացման առաջարկուած գործընթացը:

ՀԱՆՐԱՅԻՆ ՎԵՐԱՏԵՍՈՒԹԵԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՇՐՋԱՆ՝ IS/MND-ի, PEA-E -ի եւ RAW-ի վերաբերեալ հանրային վերատեսութեան ժամանակաշրջանը կը սկսի 17 Հոկտեմբեր 2017ին եւ վերջ կը գտնէ 17 Նոյեմբեր 2017ին:

ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐ ԵՒ ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹԻՒՆՆԵՐ՝ Հանեցէ՛ք նշել ձեր գործակալութեան կամ կազմակերպութեան կապի պատասխանատուին անունը, եւ ձեր մեկնաբանութիւնները ուղարկել հետեւեալ հասցէներուն:

CEQA Հարցումներ եւ Պատասխաններ
Լոս Անճելըսի Միացեալ Կրթաշրջանի
Կենսոլորտի Առողջութեան եւ Ապահովութեան Գրասենեակ
Յանձնելի՝ Տիկ. Լինտա Ուայտին, CEQA-ի Ծրագիրի Վարիչ
333 S. Beaudry Avenue, 21st Floor,
Los Angeles, CA 90017
Ե-մամակ՝ CEQA-comments@lausd.net
Please include "Grant Comp Mod" in the subject line
Կը խնդրուի «Grant Comp Mod» տողին վրայ գրել

PEA-E եւ RAW Հարցումներ եւ Պատասխաններ
Լոս Անճելըսի Միացեալ Կրթաշրջան
Կենսոլորտի Առողջութեան եւ Ապահովութեան Գրասենեակ
Յանձնելի՝ Պրն. Էնտրու Մոնտուկոյին, Կենսոլորտի
Արժեւորման Կապ
333 South Beaudry Avenue, 21st Floor
Los Angeles, CA 90017
Ե-մամակ՝ Andrew.mondugno@lausd.net
Հեռաձայն՝ (213) 241-3433

Բոլոր մեկնաբանութիւնները հասած պէտք է ըլլան 17 Նոյեմբեր 2017ի կէսօրէն ետք ժամը 5էն առաջ

ԿՐԿՆՕՐԻՆԱԿՆԵՐՈՒ ՏՐԱՄԱԴՐԵԼԻՈՒԹԻՒՆ

IS/MND-ի, PEA-E -ի եւ RAW-ի կրկնօրինակներ տրամադրելի են գրասենեակի գործունէութեան ժամերուն՝ հետեւեալ վայրերէն.

- LAUSD Office of Environmental Health & Safety, 333 South Beaudry Ave., 21st Floor, Los Angeles, CA 90017, (213) 241-3417 (by appointment)
- Ulysses S. Grant High School Library, 13000 Oxnard Street, Los Angeles, CA 91401, (818) 756-2700
- North Hollywood Amelia Earhart Regional Library, 5211 Tujunga Avenue, North Hollywood, CA 91601, (818) 766-7185
- Լոս Անճելըսի Միացեալ Կրթաշրջանի (LAUSD) Կենսոլորտի Առողջութեան եւ Ապահովութեան Գրասենեակի կայքէջին վրայ՝
CEQA Նախնական Ուսումնասիրութիւն (<http://achieve.lausd.net/ceqa>)
PEA-E եւ RAW (<http://achieve.lausd.net/siteassessment>)